Ո՜վ խորք մեծութեանն Աստուծոյ, որ այնպէս փառաւորէ զփառաւորիչս իւր և հանցէ ի լոյս զարդարութիւն արդարոց, որպէս արար այսաւր ի վախճան սրբոյս՝ զոր արար ի փոխումն մաւր իւրոյ. երկուց կուսից եցոյց զլոյս աստուածութեան իւրոյ՝ և էջ ի խնդիր նոցա՝ առաւել մեծարելով քան զբնաւ սուրբս և զսիրելիս իւր։ Կարծեմ ցուցաւ փոքրն զոր ասաց մեծ քան զՅովհաննէս։ Քանզի զայս ոչ արար բնաւից սրբոց՝ զոր արար սորա։ Եւ առեալ տանէին զմարմինն սուրբ յԱրշակաւանն ա գեղ բացագոյն ի քաղաքէն. և լոյսն երթայր կամարաձև ի վերա նորա, և հրեշտակք երգակցէին քահանայից՝ երգել դամբանական երգ մինչև հանգուցին ի խորափորին. և ծածկէին զաւրհնեալն աւրհնութեամբ՝ և զհողխացեալ հողն հողով։

Զո՞ր երանութիւն՝ կամ զո՞ր զովասանութիւն տացուք այնմ վայրի՝ որ այնպիսո արժանացաւ շնորհի։

Արդ՝ աւրհնեալ բ ես դու ի դաշտս և

---

ա. Արշակաւանն գեղ հաւանական գրչի սխալն է «Արշակաւանն»ի տեղ:

բ. Դաւիթ անյաղթից սկսած շատ սովորական են ներբողների մէջ այսպիսի օրհնութիւններ: